10 մարտի 2015 թվականի N 224 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 9-Ի N 351-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 9-ի «Պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկը հաստատելու մասին» N 351-Ն որոշման հավելվածի աղյուսակի 292-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«	292.	Կատարողական վարույթներ		
		ա) ոչ գույքային բնույթի		
		- ավարտված	7 տ.	
		- կարճված	5 տ.	
		բ) գույքային բնույթի, որոնց բռնագանձման ենթակա գումարը չի գերազանցում հարյուր հազար դրամը		
		- ավարտված	3 տ.	
		- կարճված	1 տ.	
		գ) գույքային բնույթի, որոնց բռնագանձման ենթակա գումարը գերազանցում է հարյուր հազար դրամը		
		- ավարտված	7 տ.	
		- կարճված	3 տ.	

	դ) ալիմենտի բռնագանձման հետ կապված		
	- ավարտված	7 տ.	
	- կարճված	3 տ.	
	ե) աշխատավարձի բռնագանձման հետ կապված		
	- ավարտված	7 տ.	
	- կարճված	3 տ.	
	զ) հարկադիր աճուրդի հետ կապված		
	- ավարտված	7 տ.	
	- կարճված	3 տ.	
	է) հայցի ապահովման հետ կապված		
	- ավարտված	5 տ.	
	- կարճված	3 տ.	

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ